«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ»

ԱՌԱՐԿԱ	**աշխարհագրություն**
ՀԵՂԻՆԱԿ	Համեստ Մկրտչյան
ՄԱՐԶ	Շիրակ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	«Սարատակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն…… 3
2. Գլուխ առաջին. Ինչպե՞ս են ձևավորվում արժեքները և որո՞նք են արժեքների տեսակները.....5
3. Գլուխ երկրորդ. Արժեքային համակարգի ձևավորմանն ուղղված նպատակներն ու խնդիրները՝ աշխարհագրություն ուսուցանելիս…….....7
4. Գլուխ երկրորդ. Արժեքային համակարգի ձևավորմանն ուղղված դասի պլան……..…….....16
5. Եզրակացություն…… 20
6. Գրականության ցանկ……21

Ներածություն

«Արժեք» հասկացությունը մենք շատ ենք օգտագործում երեխաների կրթության մասին խոսելիս: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ և միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում: Փորձենք ձևակերպել, թե ինչ է ի վերջո «արժեք» ասածը:

Արժեքը երևույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել: Վճարի «արժույթը» կարող է տարբեր լինել՝ տվայտանքներ, հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք եւ այլն: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը: Առանց արժեքների կյանքը դատարկ է: Հեշտ, առանց կորուստների եւ հաղթահարումների ապրելն երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձևավորման:

Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ: Նորմերը տարբեր են քաղաքում և գյուղում: Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, և որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձևավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի: Զարգացած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր: Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ:

Հիմա անդրադառնանք բարոյականությանը: Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է: Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը և չի հակասում դրանց: Անբարոյական է այն ամենը, ինչը դեմ է արժեքներին և բերում է դրանց քայքայմանը: Օրինակ, ցանկացած հասարակության մեջ անբարոյական է դավաճանությունը միայն այն պատճառով, որ այն արժեզրկում է խոստումը: Եթե խոստումն արժեք չլինի, մարդկանց համակեցությունը կվերածվի մղձավանջի, քանի որ կվերանա փոխադարձ վստահությունը:

Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը և տարածվում անբարոյականությունը: Մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է ապրում, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար վնասել:

Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմերը, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել:

Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա և՛ ցավ, և՛ ուրախություն, ունենա թե՛ դժվարություններ, թե՛ հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ և ամենաիմաստալից կրթական համակարգը:

Արժեքը պետք է վերապրել, զգալ, գիտակցել, քանի որ հեշտությամբ հնարավոր չէ ստանալ այն: Իսկ կյանքն առնաց արժեքների դատարկ է: Երբ մարդն ապրում է հեշտ, առանց կորուստների, պայքարի, այդ կյանքն երբեք չի երջանկացնում, որովհետև չի բերում արժեքների ձևավորման:

Արժեքների մեծ մասը սնվում է էթնիկական նորմերից, որոնք տարբեր են քաղաքում և գյուղում: Դրա համար բարոյական է համարվում այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը, չի հակասում դրանց: Երբ փլուզվում են արժեքները, մարդու կյանքը կորցնում է իմաստի մեծ մասը, սկսում են մեկը մեկին կոտրել, վիրավորել, վիճել միմյանց հետ և այլն: Դրա համար շատ կարևոր է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի այն օրինակելի տարածքը, ուր հաստատուն են մնում բարոյական նորմերը, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել:

Յուրաքանչյուր առարկա դասավանդելիս պետք է կարողանալ ճիշտ մոտեցումներով բացահայտել տվյալ առարկայի մեջ թաքնված արժեհամակարգերը:

Աշխարհագրություն առարկան դասավանդելիս ուսուցիչը պետք է կարողանա շատ հստակ ու նուրբ մոտեցումներով բացահայտել ներկայացվող արժեհամակարգերը: Դասավանդումը պետք է կազմակերպել այնպես, որ սովորողը կարողանա ինքնուրույն վեր հանել տվյալ թեմայի մեջ առկա արժեքները:

Աշխարհագրության մեջ վեր հանվող արժեքներից են՝ սերը, ընտանիքը, ծնողը, հայրենիքը, արյան գնով ձեռք բերված հայրենի հողը, հանդուրժողականությունը, համբերատարությունը և այլն:

Արժեհամակարգերի ձևավորման ընթացքում պետք է կարողանալ ճիշտ մոտեցումներով երեխայի հոգին հարստացնել, միաժամանակ ցույց տալ աշխարհագրության ճանաչողական արժեքը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ ԱՐԺԵՔՆԵՐԸ, ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Արժեքները կարելի է դասակարգել որպես համընդհանուր, մարդկային, անձնական, ընտանեկան, սոցիալ-մշակութային, բարոյական, էթիկական, գեղագիտական, հոգևոր, նյութական, տնտեսական և պրագմատիկ:

Մարդկային արժեքները սերնդեսերունդ փոխանցվում են կրթության ու օրինակի միջոցով: Երեխաները սովորում են տանը և դպրոցում, բայց նաև ընդօրինակում են իրենց մեծերին, ուստի ուժեղ արժեքներ ունեցող տանը պետք է համաձայնություն լինի ասվածի և արվածի միջև:

Արժեքներն ազդում են այն որոշումների և վարքագծի վրա, որոնք մարդիկ կայացնում են իրենց կյանքի ընթացքում: Ուստի դրանք գործողության սկզբունքներ են: Օրինակ, եթե մարդը գնահատում է «բարեկամությունը», ուրեմն նա գիտի ընկերության արժեքը, նա կորոշի ավելի շատ ժամանակ անցկացնել իր ընկերների հետ և դրան կարևորություն կտա այլ բաների համեմատ:

Խոսակցական խոսքում «արժեքներ» բառը ունի դրական երանգ: Եթե ասվում է, որ ինչ-որ մեկը «արժեքներ ունի», նշանակում է, որ նա ունի այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հարգանքը, խոնարհությունը, համառությունը, ազնվությունը կամ այլ արժեքներ, որոնք համարվում են սոցիալապես դրական: Բոլորն ունեն արժեքներ, աշակերտը չի կարող արժեքներ չունենալ: Եթե ինչ-որ աշակերտ գնահատում է եսասեր լինելը կամ հպարտ լինելը, ուրեմն նա ունի եսասիրության և հպարտության արժեք:

Առանձնացնում են հետևյալ համընդհանուր արժեքները՝

Անկեղծություն, պատասխանատվություն, արդարություն, ազատություն, բարություն, ազնվություն, սեր, բարեկամություն, հարգանք, վստահություն, համերաշխություն և այլն:

Հետևյալ մարդկային արժեքները՝

Հանդուրժողականություն, բարեկամականություն, խոնահություն, հավատարմություն, զգայունություն և այլն:

Հետևյալ անձնական արժեքները՝

Հավատարմություն, երախտագիտություն, կարգապահություն, համբերություն, հաստատակամություն, կարեկցանք, համառությւոն և այլն:

Հետևյալ ընտանեկան արժեքները՝

Ընտանեկան հանգույց, հարգանք տարեցների նկատմամբ, բարեկամականություն, համերաշխություն, անկեղծություն և այլն:

Հետևյալ սոցիալ-մշակութային արժեքները՝

Հայրենասիրություն, կրոն, ճշտապահություն, առատաձեռնություն, ընտանիք և այլն /չնայած գոյություն ունեն բարեկամության նման համընդհանուր արժեքներ, որոնք դրական են համարվում գրեթե բոլոր երկրներում, կան այլ արժեքներ, որոնք տարբերվում են մի երկրից մյուսը: Օրինակ՝ երկրի բնակիչները կարող են ավելի շատ կարևորություն տալ կրոնին և հարգանքին: Այլ երկրից եկողները, ընդհանուր առմամբ, կարող են ավելի շատ կարևորություն տալ խոսքի և զվարճանքի ազատությանը/:

Հետևյալ բարոյական արժեքները՝

Հարգանք մյուսների նկատմամբ, հանդուրժողականություն, հավատարմություն, ազնվություն և այլն:

Հետևյալ հոգևոր արժեքները՝

Կրոնական հավատալիքներ, ներդաշնաքուէյլքն, հավատ և այլն:

Հետևյալ գեղագիտական արժեքները՝

Իմաստություն, ընթերցանություն, հետաքրքրասիրոթյուն և այլն:

Հետևյալ քաղաքական արժեքները՝

Ազատություն, հավասարություն, ժողովրդավարություն և այլն:

Հետևյալ մասնագիտական կամ աշխատանքային արժեքները՝

Հավատարմություն, պատասխանատվություն, ստեղծագործականություն, համագործակցություն, թիմային աշխատանք, հաղորդակցություն, նորարարություն և այլն:

Արժեքները կարևոր են, քանի որ դրանք օգնում են աշակերտին որոշել, թե կյանքում ի՞նչն է կարևոր: Մյուս կողմից, դրանք էական են հասարակության մեջ ապրելու համար: Համընդհանուր արժեքները՝ հանդուրժողականությունն ու համերաշխությունը, թույլ են տալիս աշակերտներին հարգել միմյանց՝ չնայած իրենց տարբերություններին:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑԱՆԵԼԻՍ

Աշխարհագրությունն անցել է զարգացման տարբեր շրջափուլեր: Յուրաքանչյուր շրջափուլ իր մեջ պարունակում է ժողովրդի համար կարևոր նշանակություն ունեցող ազգային արժեքներ:

Հետազոտական աշխատանքում վեր են հանվելու ազգային այն արժեքները, որոնք դաստիարակում են՝ հայրենասիրություն, ժողովրդականություն, հավատարմություն, նվիրվածություն, հարգանք սեփական երկրի ու մի թեզ հողի նկատմամբ:

Հետազոտական աշխատանքում փորձելու ենք ներկայացնել այն խնդիրներն ու նպատակները, որոնք դրվելու են մեր առջև աշխարհագրություն առարկայի դասավանդման ընթացքում առկա արժեքային համակարգերի բացահայտմանը:

Աշակերտի արժեքային կողմնորոշումները նրա անհատականության ամենակարևոր հատկանիշն են, դրանք որոշում են նրա հարաբերություններն ու արտաքին աշխարհի հետ փոխգործակցության առանձնահատկությունները և կարգավորում աշակերտի վարքագիծը: Գիտակցելով սեփական արժեքային կողմնորոշումները՝ աշակերտը փնտրում է իր տեղը աշխարհում՝ անդրադառնալով կյանքի իմաստին ու նպատակին:

Աշակերտի արժեքային կողմնորոշումների կառուցվածքում առանձնանում են երեք բաղադրիչներ՝ ճանաչողական, հուզական և վարքային: Դրանցից յուրաքանչյուրը ներգրավված է արժեքային կողմնորոշման ձևավորման մեջ և կարող է ինքնուրույն նշանակություն ունենալ ինչպես բովանդակությամբ, այնպես էլ դրսևորման աստիճանով:

Աշակերտի գործունեության վրա էապես ազդում են արժեքային կողմնորոշումները, որոնք արտահայտում են մարդու գիտակցված վերաբերմունքը սոցիալական իրականությանը և որոշում նրա վարքի լայն շարժառիթը: Ուստի արժեքային կողմնորոշումները հասուն անհատականության ամենակարևոր մտավոր հատկանիշն են:

Հանրակրթության հիմնական պետական չափորոշիչը կենտրոնացած է աշակերտի անձնական արժեքների ձևավորման վրա: Արժեքային համակարգին ներկայացվող պահանջներն արտահայտվում են սովորողի՝ որպես անձի և քաղաքացու ցուցաբերած վերաբերմունքի, դիրքորոշման, վարքի և գործելակերպի միջոցով:

Բարոյական փորձ ձեռք բերելիս աշակերտն անմիջականորեն առնչվում է իրականությանը, որն այնքան բարդ է, որ դեռահասի համար հաճախ դժվար է որոշել դրա բարոյական կողմը և գործել հայտնի բարոյական նորմերի հիման վրա: Այս առումով աշխարհագրության դասերի ժամանակ ցանկալի է ստեղծել խնդրահարույց իրավիճակներ, որոնցում դեռահասը վերլուծում է իրավիճակը և ընտրում խնդրի լուծման հնարավոր ճանապարհը:

Աշխարհագրության «Աշխարհագրական թաղանթ: Մայրցամաքներ և օվկիանոսներ» դասընթացի ուսումնասիրման շնորհիվ սովորողի մոտ պետք է ձևավորի հետևյալ արժեքային համակարգը՝

- Գիտակցի աշխարհագրական թաղանթի ոլորտների փոխադարձ կապերի կարևորությունը՝ որպես նրա ամբողջականության հիմնարար պայման
- Գիտակցի մայրցամաքների և օվկիանոսների բազմազանությունը որպես երկրագնդի հարստություն
- Գիտակցի երկրագնդի բնության պահպանության և այդ առումով քաղաքացիական դիրքորոշման անհրաժեշտությունը
- Գնահատի մայրցամաքների և օվկիանոսների բնության տարրերի էկոլոգիական ու գեղագիտական արժեքը
- Արժևորի մայրցամաքների և օվկիանոսների բնական պայմանների ու ռեսուրսների նշանակությունը, դրանց ռացիոնալ օգտագործման և պահպանության անհրաժեշտությունը:

Աշխարհագրության «Հասարակական և տարածաշրջանային աշխարհագրություն» դասընթացի ուսումնասիրման շնորհիվ սովորողի մոտ պետք է ձևավորի հետևյալ արժեքային համակարգը՝

- Գիտակցի երկրագնդի բնական ռեսուրսների սահմանափակությունը
- Մերժի բնության նկատմամբ սպառողական հոգեբանությունը
- Գիտակցի տարբեր աշխարհամասերի, տարածաշրջանների, երկրների ժողովրդագրական ցուցանիշների փոփոխությունը և դրանց հետևանքները
- Կարևորի բնակչության կրթական մակարդակի շարունակական բարձրացման անհրաժեշտությունը՝ որպես պետության զարգացման գլխավոր երաշխիք
- Գիտակցի համաշխարհային տնտեսության՝ որպես փոխկապակցված միասնական համակարգի, դերը յուրաքանչյուր երկրի ազգային տնտեսության զարգացման

գործում

- Գնահատի տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման հեռանկարները՝ ուսումնասիրվող տարածաշրջաններում և պետություններում
- Գիտակցի աշխարհաճանաչողության մեջ աշխարհագրական մտածողության՝ տարածականության, համալիրության, գլոբայնության, կոնկրետության կարևորությունը՝ որպես օբյեկտիվ աշխարհի վերաբերյալ համակարգված և գիտական գիտելիքներ ձեռք բերելու անփոխարինելի միջոց
- Կարևորի բնակչության կենսապայմանների բարելավման գործում տնտեսության զարգացման նշանակությունը

«Հայաստանի աշխարհագրություն» դասընթացի ուսումնասիրման շնորհիվ սովորողի մոտ պետք է ձևավորի հետևյալ արժեքային համակարգը՝

- Կարևորի Հայկական լեռնաշխարհը որպես հայության բնօրրան և հայ ժողովրդի հայրենիք
- Գիտակցի Հայաստանի ԱԴ առանձնահատկություններից բխող առավելություններն ու սահմանափակումները և դրա վերաբերյալ ունենա սեփական դիրքորոշում
- Գիտակցի Հայաստանի և Հայկական լեռնաշխարհի բնառեսուրսային, բնապատմական, հոգևոր-գեղագիտական արժեքը
- Գնահատի ՀՀ տնտեսության զարգացման բնականա և հասարակական արտադրական ներուժը և հեռանկարները
- Գիտակցի իր հայրենիքի բնառեսուրսային ներուժի ռացիոնալ օգտագործման, պահպանության և վերականգմնան կարևորությունը

Աշակերտի մեջ ահա այս արժեքային համակարգի ձևավորման ու կատարելագործման շնորհիվ մենք կկերտենք պատասխանատու քաղաքացիներ:

Կարող եմ փաստել, որ

- դպրոցական աշխարհագրության ուսումնասիրման գործընթացում սովորողների արժեքային ինքնորոշումն իրականացվում է արժեբանական և համակարգային գործունեության մոտեցումների հայեցակարգային դրույթների հիման վրա.

- մշակվել են ախտորոշիչ գործիքներ, արտադրողականությունը հաստատվել է էմպիրիկորեն, և դպրոցական աշխարհագրության ուսումնասիրման գործընթացում սովորողների արժեքային ինքնորոշման հայեցակարգը արդյունավետորեն իրականացվում

է դասասենյակի գործընթացում անձնական կրթական ուսուցման արդյունքների ձևավորման համատեքստում և արտադպրոցական գործունեության միջոցով:

Հիմնական հանրակրթության համակարգում աշխարհագրությունը միակ դպրոցական առարկան է, որի բովանդակությունը միաժամանակ ընդգրկում է ինչպես բնական, այնպես էլ հումանիտար-հասարակական գիտական գիտելիքների բազմաթիվ ասպեկտներ: Սա աշակերտներին թույլ է տալիս.

- աշխարհագրական միջավայրի համապարփակ ըմբռնումը՝ որպես մարդկության բնակավայր՝ տարբեր աշխարհագրական պայմաններում մարդկանց բնության, կյանքի և տնտեսության առանձնահատկություններին ծանոթանալու միջոցով.
- սոցիալապես նշանակալի անհատականության գծեր՝ հայրենասիրություն, քաղաքացիական և սոցիալական համերաշխություն և գործընկերություն, քաղաքացիական, սոցիալական և բարոյական պատասխանատվություն, քաղաքացիական հասարակության արժեքների համարժեք ընկալում. մտահոգություն ազգամիջյան խաղաղության և ներդաշնակության պահպանման համար, աշխատասիրություն:
- ամենակարևոր մեթոդաբանական դրույթը, որը մեծապես որոշում է աշխարհագրության դասընթացի բովանդակության ընտրությունն ու մեկնաբանությունը, դրա շրջանակներում ազգային հիմնական արժեքների համակարգի ձևավորման դրույթն է՝ որպես դաստիարակության հիմք, մատաղ սերնդի հոգևոր և բարոյական զարգացում և սոցիալականացում:

Աշխարհագրության դասավանդման ընթացքում պետք է ձևավորվեն հետևյալը.

- ✓ արժեքային կողմնորոշումներ
- ✓ գլոբալ, տարածաշրջանային և տեղական մակարդակներում հասարակության անդամի իրազեկում
- ✓ մարդկության գլոբալ խնդիրների նշանակության և ընդհանրության գիտակցումը և մեր ժամանակի գլոբալ մարտահրավերների դեմ համերաշխ լինելու պատրաստակամությունը
- ✓ ներդաշնակորեն զարգացած սոցիալական զգացմունքներն ու որակները
- ✓ հայրենասիրություն
- ✓ ընդհանուր ազգային, հոգևոր և բարոյական արժեքների ընդունում
- ✓ սեր սեփական հայրենիքի, տարածաշրջանի, տեղանքի նկատմամբ

- ✓ քաղաքացիություն, հավատ Հայաստանի նկատմամբ
- ✓ հայրենիքի համար անձնական պատասխանատվության զգացում,
- ✓ պատասխանատվություն ժամանակակիցների և ապագա սերունդների նկատմամբ
- ✓ հարգանք Հայաստանի բնության, պատմության, մշակույթի, հայ և այլ ժողովուրդների ազգային առանձնահատկությունների, ավանդույթների և ապրելակերպի նկատմամբ
- ✓ հանդուրժողականություն, էմոցիոնալ և արժեքային վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, դրա պահպանման և ռացիոնալ օգտագործման անհրաժեշտության գիտակցում:

Ներկայումս հատուկ ռիսկային գոտի է հանդիսանում երիտասարդների գիտակցությունը, ովքեր տարիքային առանձնահատկություններից ելնելով հեշտությամբ կարող են ընկնել տարբեր, այդ թվում՝ որոշակի վտանգ ներկայացնող գործոնների ազդեցության տակ: Ժամանակակից պայմաններում երիտասարդներին տրված են լայն հնարավորություններ՝ իրացնելու իրենց կարողությունները, կրթություն ստանալու, ազատ ժամանակն անցկացնելու համար: Սակայն նյութատեխնիկական պլանի շատ բարենպաստ պայմաններում, երիտասարդության շրջանում կրթական ոլորտում լայն հնարավորությունների, հոգևոր և բարոյական բնույթի խնդիրները զգալիորեն սրվում են:

Բարոյական դաստիարակության ռազմավարության իրականացման գործում առանձնահատուկ նշանակություն ունի աշխարհագրության դպրոցական դասընթացը, որը ներառում է մեր հայրենիքի առանձնահատուկ բնույթի, բնակչության և տնտեսության բացահայտումը:

Ժամանակակից դպրոցներում պատրաստի գիտելիքների փոխանցումը տեսողական, բանավոր և գործնական մեթոդներով բավարար չէ աշակերտների մոտ հոգևոր և բարոյական արժեքների ձևավորման համար: Ուստի կրթության կազմակերպման այլ մոտեցում է պետք, մասնավորապես՝ աշխարհագրության ուսուցման մեջ խաղային տեխնոլոգիաները:

Խաղի գործունեությունը երեխայի բնական կարիքն է, որը հիմնված է մեծահասակների ինտուիտիվ իմիտացիայի վրա: Կրթական խաղը նոր գիտելիքների, գործունեության ձևերի, աշխարհի նկատմամբ արժեքային վերաբերմունքի ձեռքբերման ամենաարդյունավետ մեթոդներից է, անհրաժեշտ է երիտասարդ սերնդին պատրաստել կյանքի տարբեր իրավիճակների և կարող է դառնալ վերապատրաստման և կրթության ակտիվ մեթոդներից մեկը: Աշխարհագրության դասերին սովորողների խաղային գործունեությունը կազմակերպելով՝ ուսուցիչն օգնում է ուսանողներին ավելի մատչելի ձևով յուրացնել նոր բովանդակությունը և դրանով իսկ դրդում նրանց հետագա ուսումնասիրել առարկան: Նպատակին հասնելու համար տղաները փորձում են ուշադիր լինել, ցուցաբերել հնարամտություն, նախաձեռնողականություն, կամք: Խաղի

ընթացքում սովորողը թողնում է պասիվ ունկնդրի դերը և դառնում ուսումնական գործընթացի ակտիվ մասնակից: Խաղը կարելի է բնորոշել որպես անարդյունավետ գործունեության տեսակ, որի շարժառիթը ոչ թե արդյունքի, այլ հենց գործընթացի մեջ է: Խաղի ընթացքում գիտելիքներն ու հմտությունները համադրվում են: Խաղը դասարանում ստեղծում է նաև դրական «կլիմա», որը շահավետ է ոչ միայն սովորողների, այլև ուսուցչի համար:

Հարկ է նշել, որ խաղը կարող է ոչ միայն օգնել ճանաչողական հետաքրքրության ձևավորմանը, այլև նպաստել հոգևոր և բարոյական արժեքների ձևավորմանը: Յուրաքանչյուր խաղում կան կանոններ, որոնք չեն կարող խախտվել, որոնք կարգապահում են, դաստիարակում են ազնվություն, ճշգրտություն սեփական անձի հանդեպ, համբերություն, կամք, թիմում աշխատելու կարողություն, լսել և սովորել հարգել ուրիշների կարծիքը:

Աշխարհագրությունը մի առարկա է, որտեղ կարող ես սեր սերմանել հայրենիքի հանդեպ, հարգանք սեփական երկրի բնության նկատմամբ, սովորեցնել գնահատել և հարգել մարդկանց, նրանց գործը, մշակույթն ու ավանդույթները, հանդուրժող վերաբերմունք ցուցաբերել նրանց ազգության և դավանանքի նկատմամբ: Այս ժամանակահատվածում կարևոր է օգնել դեռահասին զբաղվել անձնական բարոյական և արժեքային կողմնորոշումներով, սովորեցնել նրան վերահսկել իր վարքը և պատասխանատու լինել իր արարքների համար: Աշխարհագրության դասավանդման մեթոդաբանության մեջ կան աշակերտների մեջ հոգևոր և բարոյական արժեքներ սերմանելու տարբեր եղանակներ: Խաղային տեխնոլոգիաների օգնությամբ, մեր կարծիքով, հնարավոր է մոդելավորել կյանքի և կրթական խնդրահարույց իրավիճակները, կենտրոնացնել խաղային գործողությունները իրական խնդիրների և հարաբերությունների շուրջ

Ուսումնասիրության նպատակը

Ժամանակակից կարգավորող փաստաթղթերի, աշխարհագրության կրթական և մեթոդական համալիրների, աշխարհագրության ուսուցչի համար մեթոդական առաջարկությունների և ձեռնարկների վերլուծությունը թույլ տվեց բացահայտել որոշ հակասություններ: Մի կողմից, ժամանակակից պետական կրթական ստանդարտը մեծ պահանջներ է դնում աշակերտի անձնային որակների ձևավորման, նրա հոգևոր և բարոյական զարգացման վրա, մյուս կողմից, մենք նկատում ենք աշխարհագրության դասերին խաղային տեխնոլոգիայի անբավարար կիրառումը և դրա զարգացումը: Բացահայտված հակասությունները որոշեցին մեր ուսումնասիրության խնդիրը և նպատակը՝ որպես աշխարհագրության դասերին հոգևոր և բարոյական արժեքներ ձևավորելու համար խաղային տեխնոլոգիայի ներդրման նոր մեթոդաբանության մշակում և արդեն եղածի հաճախակի կիրառում՝ դասապրոցեսին:

Հետազոտության նյութեր և մեթոդներ

Ուսումնական գործընթացում կրթական և ճանաչողական գործունեությունը ուժեղացնելու համար կրթական խաղերն ավելի ու ավելի են օգտագործվում աշխարհագրության ուսուցման մեջ: Խաղում դրսևորվում և ձևավորվում են սոցիալական փոխազդեցության էթիկական և հաղորդակցական ասպեկտները: Խաղի բուն բովանդակությունը, դրա սյուժեն և կանոնները ազդում են երեխաների միջև բարոյական հարաբերությունների ձևավորման վրա (Լ.Վ. Արտեմովա), նպաստում են վարքի բարոյական նորմերի մասին պատկերացումների խորացմանն ու համախմբմանը (S.N. Karpova, L.G. Lysyuk): Հանրակրթական դպրոցի պայմաններում դպրոցականների անձի հոգևոր և բարոյական դաստիարակությունը պետք է հիմնված լինի կրթության հիմնական բաղադրիչի վրա և իրականացվի որոշակի մանկավարժական պայմաններում, որոնք զարգացնում են անհատի արժեքային կողմնորոշումները: Մանկավարժական պայմանները հասկացվում են որպես օբյեկտիվ հնարավորությունների, բովանդակության, ձևերի և մեթոդների, մանկավարժական տեխնիկայի, ինչպես նաև սոցիալական միջավայրի ազդեցություն, որն ուղղված է ուսանողի անձի ձևավորման հոգևոր և բարոյական խնդիրների լուծմանը:

Մեթոդական համակարգը կազմելիս մենք հենվել ենք հետևյալ սկզբունքների վրա.

- կանաչապատման սկզբունքը, որը ներառում է ուսանողների հոգևոր և բարոյական դաստիարակության իրականացում աշակերտի և բնական միջավայրի փոխազդեցության հիման վրա, ինչպես նաև կենտրոնացնում է կրթության ռազմավարական նպատակը մշակույթի և պատասխանատվության ձևավորման վրա
- բարոյական ընտրության սկզբունքը, որը ներառում է ազդեցություն անհատի գիտակցության բոլոր ոլորտների վրա՝ բարոյական դիրք զարգացնելու համար.
- արժեքային կողմնորոշման սկզբունքը, որը իմաստային կենսական նշանակություն ունի ձևավորվող անձի համար, կենտրոնական տեղ է զբաղեցնում նրա վարքագծի որոշման համակարգում, որոշում է բնավորության ուղղությունն ու ձևավորումը, անձի աշխարհայացքը, բարոյական իդեալները.
- հուզական-զգայական ճանաչողության սկզբունքը արտացոլվում է ուսանողների կողմից առաջարկվող նյութի ըմբռնման և ըմբռնման մեջ: Նյութի ներկայացման հուզականությունը և դրա համապատասխան բովանդակային կողմը հանգեցնում են անմիջական ազդեցության նյութի արժեքային ընկալման վրա, ինչը հանգեցնում է որոշակի հույզերի զարգացմանը,
- բնական և մշակութային համապատասխանության սկզբունքը հիմնված է անձի՝ որպես բնական միջավայրի օրգանական մասի, ինչպես նաև մշակութային բաղադրիչի անբաժանելի մասի և մեր ներսում այս բաղադրիչի զարգացման յուրահատկության վրա:

Հետազոտության արդյունքներ և քննարկում

Հոգևոր և բարոյական արժեքների աստիճանական ձևավորման հիման վրա մշակված աշխարհագրական խաղերի համակարգը հաջողությամբ փորձարկվել է Նիժնի Նովգորոդի դպրոցներում: Անցկացված մանկավարժական փորձը հաստատեց մշակված մեթոդաբանության արդյունավետությունը, որն արտահայտվում է սովորողների անձնային որակների զարգացման դրական դինամիկայի մեջ: Ուսանողների հոգևոր և բարոյական արժեքների ձևավորման ակնկալվող կրթական արդյունքներն արտահայտվել են ակտիվ և պատասխանատու քաղաքացիական դիրքում. իրենց փոքր հայրենիքի ժողովուրդների մշակութային արժեքների և հոգևոր ավանդույթների գիտակցված յուրացում. մեր ժամանակի գլոբալ խնդիրներում նրանց ներգրավվածության գիտակցումը, ներառյալ բնապահպանական խնդիրները, գիտակցելով դրանց լուծմանն անձնական ներդրման անհրաժեշտությունը և հնարավորությունը, դասարանի, դպրոցի, շրջանի միջավայրի բարելավմանը ակտիվորեն մասնակցելու պատրաստակամությունը. , քաղաք.

Ժամանակակից կրթության կարևորագույն նպատակը և հասարակության և պետության առաջնահերթ խնդիրներից մեկը Հայաստանի բարոյական, պատասխանատու, նախաձեռնող և իրավասու քաղաքացու կրթությունն է:

Այս առումով կրթության գործընթացը պետք է ընկալվի ոչ միայն որպես գիտելիքների, հմտությունների և կարողությունների համակարգի յուրացման գործընթաց, այլ նաև որպես անձի զարգացման, հոգևոր, բարոյական, սոցիալական, ընտանեկան և այլ արժեքների ընդունման գործընթաց:

Բնության նկատմամբ սովորողների հոգևոր, բարոյական, հուզական և արժեքային վերաբերմունքի ձևավորման գործընթացը բավականին բարդ է և աշխարհագրության դասավանդման գործընթացում հաշվի է առնում հետևյալ հատկանիշները.

•աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների, ինտելեկտուալ և ստեղծագործական կարողությունների զարգացում;

• մարդկանց հետ շփվելու, տարբեր սոցիալական դերերի կատարմամբ թիմերում աշխատելու, իրեն ներկայացնելու կարողություն.

• շրջապատող աշխարհում նավարկելու, իրենց գործողություններում և արարքներում թիրախային և իմաստային պարամետրերը ընտրելու, որոշումներ կայացնելու ունակություն:

• առօրյա կյանքում աշխարհագրական գիտելիքները կիրառելու կարողություն՝ բացատրելու և գնահատելու որոշակի տարածքում կենսապայմաններին հարմարվողականությունը:

- Հաղորդակցական՝ լսելու և երկխոսության մեջ մտնելու, խնդիրների կոլեկտիվ քննարկմանը մասնակցելու կարողություն:

Արժեքային համակարգի ձևավորմանն ուղղված նպատակներից և խնդիրներից հետևյալներն առավել կարևոր տարրերից են:

Նպատակը- նպաստել ստեղծագործելու ընդունակության ձևավորման կարևոր՝ համեմատելու միջոցով նոր գիտելիք ձեռք բերելու, այն սահմանելու, հետազոտելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Եվ ընդհանրապես ցանկացած գործունեությամ մեջ առկա է սովորելը:

Խնդիրը պետք է լինի աշակերտի կողմից ոչ թե դասանյութի ուղղակի ընթերցումը, այլ այն, որ սովորողը ձգտի հաղթահարել կարդալու ընթացքում նկատած հակասությունները, գտնի իրեն անհանգստացնող հարցերի պատասխանները և այլն:

Նպատակը միաժամանակ նպաստում է գիտելիքի, ուսուցման գործընթացի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը, գաղափարների, տեսակետերի, անձնական որակների, ինքնագնահատման, ինքնուրույնության ձևավորմանը:

Հետազոտության ընթացքում գնալով ավելի հստակ է դառնում այն փաստը, որ նպատակը արդյունավետ կլինի այն դեպքում միայն, եթե ուսուցիչը իր ամեն մի քայլը պլանավորելով է իրականացնում իր աշխատանքը:

Սովորողների մեջ պետք է սերմանել առավել արժեքավորը՝ հայրենասիրություն: Աշակերտը պիտի գիտակցի, որ հայրենիքի սերը կարևոր է՝ չի փոխվում, չի անհետանում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Ուսումնական գործընթացի ճիշտ կազմակերպումը ապահովում է ծրագրային ցանկացած նյութի արդյունավետ ուսուցումը: Սրան, եթե ավելանա նաև ժամանակակից մեթոդների ու հնարների նպատակահարմար ընտրությունն ու կիրառությունը, ապա ուսուցման գործընթացն ավելի լավ կյուրացվի սովորողների կողմից: Ուսուցիչը հստակ գիտակցելու է իր դասի նպատակները, մշակելու է դրանց հասնելու դյուրին և մատչելի ուղիներ, միջոցներ, հնարներ:

Միջին դպրոցում ուսուցիչը զարգացնում է աշակերտների ոչ միայն արտահայտիչ, այլև ընթերցծն ըմբռնելու, նյութն ինքնուրույն հոտազոտելու, վերլուծելու կարողությունները: Այս ամենին կօգնեն՝ մասնագիտական խոր և կայուն գիտելիքները, ուսուցման գործընթացի ժամանակակից ռազմավարության մշակումը, սովորել սովորեցնելու նախապայմանը և այլն:

Փորձենք նշված մոտեցումների ու պահանջների շրջանում ներկայացնել *«Երկրագնդի բնակչության և երկրնորի ապահովվածությունը տարբեր տեսակի ռեսուրսներով»* թեման

Առարկան- աշխարհագրություն

Դասարանը – 11-րդ

Տևողությունը- 45 րոպե

Դասի նպատակները- բացատրել «գյուղատնտեսական հողահանդակ» և «հողային ռեսուրսներ» հասկացությունների տարբերությունը, թվել երկրներ, որոնք ունեն մշակելի հողատարածքների զգալի չափաբաժին, առանձնացնել ջրային ռեսուրսներով հարուստ և աղքատ շրջաններ, գնահատել անտառների նշանակությունը ԱԹ համար, մարդու կյանքում և տնտեսության մեջ, առանձնացնել մեր երկրի համար ամենակարևոր համարվող ռեսուրսը

Խնդիրները - լուռ և բարձրաձայն ընթերցանություն, բովանդակության վերարտադրություն, բնութագրական աշխատանք, գրառումներ կատարելու փորձ:

Ուսուցման նյութեր ու պարագաներ- կոնֆետներով կոլբա, գունավոր թղթեր, քարտեզ

Դասի ընթացքը: Դասի սկիզբ /7 րոպե/

Ուսուցիչը ողջունում է «***Գուշակություն» մեթոդով*** կենտրոնացնում աշակերտներին.

- Ո՞րն է հետևյալ բառերի համար ընդհանուր:

Բնական, տնտեսական, հողային, հանքային, կլիմայական, ռեկրեացիոն

Աշակերտները գուշակում են բառը /ռեսուրս/

(Մեթոդ՝, Արա՛ հիմա)

Ուսուցիչը մանրամասնում է. որպեսզի ավելի շատ ինֆորմացիա հիշենք ռեսուրսների մասին, լրացնենք «հավասարումը» ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆ + ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍ =

ՌԵՍՈՒՐՍԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ + ՌԵՍՈՒՐՍԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ =

Ուսուցիչը ներկայացնում է դասի նպատակները և հարցնում աշակերտներին, թե ռեսուրսների ի՞նչ խմբեր կան և իրենց կարծիքով ինչո՞ւ է կարևոր իմանալ տեղեկություն ՌԵՍՈՒՐՍՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎ և սակավ ապահով երկրի մասին:

Նոր նյութի ներկայացում /15 րոպե/

Ուսուցչուհին աշակերտներին ցույց է տալիս սեղանին դրված կոլբայի մեջ լցված կոնֆետները և համեմատում դրանք երկրագնդի ռեսուրսների հետ, հետո առաջարկում, որ բոլորը վերցնեն որոշակի քանակությամբ կոնֆետ, այնքան՝ ինչքան իրենց անհրաժեշտ է: Երբ բոլոր աշակերտները վերցնում են կոնֆետները, ուսուցչուհին հարցնում է աշակերտներին.

-Գտնել կապը՝ մոր դասի և համարյա դատարկված կոլբայի միջև:

Ուսուցչուհին նոր նյութը ներկայացնելիս թվում է ռեսուրսների խմբերը և դրանք թղթի վրա գրված փակցնում գրատախտակին, այնուհետև հնչեցնում հետևյալ միտքը ***(Մեթոդ՝ «սատանայի վկա»)*** «երկրագնդի վրա հանքային ռեսուրսներից ամենատարածվածը երկաթն ու նիկելն են», հետո առաջարկում ուղղել նախադասությունը:

(Մեթոդ՝ «լրացրու սյունակը»): Ուսուցիչը հրահանգում է՝

- հաշվել 1-4-ը և բաժանվել խմբերի, ծանոթանալ դասագրքում տրված նյութին, յուրաքանչյուրդ մոտենում եք գրատախտակին ու գրում համապատասխան խմբին պատկանող ռեսուրս, «Ավարտ» հրահանգից հետո դադարեցնում ենք: Ունեք 5 րոպե:

Ընկալման ստուգում՝

- Ի՞նչ եք անելու, ինչպե՞ս եք աշխատելու:

- Ի՞նչ եք անելու «Ավարտ» հրահանգից հետո, ինչքա՞ն ժամանակ ունեք:

- Ո՞րն է « գյուղատնտեսական հողահանդակ» և «հողային ռեսուրս» հասկացությունների տարբերությունը:

Գործնական աշխատանք /8 րոպե/ ***(Մեթոդ՝ «գիտելիքի դոմինո»)***

Ուսուցիչը հրահանգում է՝

Քայլ 1 - ձեզանից յուրաքանչյուր երկուսին տրվում է մեկ քարտ,

Քայլ 2 - Ուսուցչի հրահանգով սովորողներից մեկը իր մոտի քարտը, վրայի հարցը կարդալով, դնում է սեղանին:

Քայլ 3 - Հնչած հարցի պատասխանն ունեցող սովորողը ասում է պատասխանը և իր քարտը դնում գրատախտակին՝ նախորդ քարտի հարցի շարունակությամբ, ու կարդում իր քարտի հարցը:

Քայլ 4 - Հաջորդաբար շրջանաձև դրվում են բոլոր քարտերը:

Քայլ 5 - Ավարտին շրջվում են բոլոր քարտերը, և ճիշտ դասավորվածության պարագայում քարտերի դարձերեսին երևում է թեմայի կարևոր հասկացությունը կամ միտքը: Օրինակ՝ Ինչպես առանց **հողի**, այնպես էլ առանց հայրենիքի ապրել չի կարելի: Ունեք 5 րոպե:

Քայլ 6 - 2-3 աշակերտ արտահայտում է վերջնական մտքի վերաբերյալ սեփական մոտեցումները:

Ընկալման ստուգում՝

- Ի՞նչ եք անելու:
- Ինչպե՞ս եք աշխատելու:
- Ի՞նչ եք անելու «Ավարտ» հրահանգից հետո:
- Ինչքա՞ն ժամանակ ունեք:

Ինքնուրույն աշխատանք /8 րոպե/

(Մեթոդ «կիսատ նախադասություն») Ուսուցիչը Տալիս է հրահանգ.

լսել նախադասությունը և շարունակել միտքը, հարցին պատասխանում է այն աշակերտը ում անունը ուսուցիչը կհանի արկղից:

-Ո՞րն է երկրակեղևում ամենատարածված մետաղը, թվիր 3 գունավոր մետաղ:

-Թվիր վառելիքային ռեսուրս և դրա արդյունահանմամբ առաջատար երկիր:

-Թվել գյուղատնտեսական նշանակության հողերը:

-Մոլորակի յուրաքանչյուր բնակչի ինչքա՞ն վարելահող է բաժին ընկնում:

-Որ երկրներն են հարուստ ջրային ռեսուրսներով:

-Ի՞նչ նշանակություն ունեն անտառները:

Կատրվում է գնահատումը հետևյալ կերպ: Հայշվի են առնվում մի քանի առանձնահատկություններ.

- վերլուծական կարողություն
- ինքնուրույն եզրահանգումներ
- դիմացինին լսելու կարողություն
- հանդուրժողականության դրսևորում
- ազգային արժեքների վերհանում

Դասի ամփոփում / 7րոպե/

Ուսուցիչն աշակերտների միջոցով անդրադարձ է կատարում դասի նպատակներին:

Դասին անդրադարձ կատարելու համար կիրառվում է

ՆՇԵՔ ՄԵԿ ԲԱՆ, ՈՐ ԿՈՒԶԵՆԱՅԻՔ ՀԻՇԵԼ ԱՅՍ ԴԱՍԻՑ ՏԱՍԸ ՏԱՐԻ ԱՆՑ

Տնային հանձնարարությունը՝ Գործնական աշխատանք էջ 34

Տեղադրում եմ որոշ նկարներ դասապրոցեսից և աշակերտների թողած հետադարձ կապը



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հետազոտական այս աշխատանքում ներկայացվեցին այն ընդհանուր նպատակներն ու խնդիրները, որոնք կկիրառվեն ի նպաստ աշակերտների արժեհամակարգի ձևավորման: Ուսուցչի ճիշտ և նպատակաուղղվածգործունեության շնորհիվ կարել է հասնել ցանկալի արդյունքների:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ սովորողների մեջ ազգային արժեքների ձևավորումը շատ կարևոր փուլ է, կարևոր գործընթաց ուսումնական գործունեության ընթացքում:

Ազգային արժեքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեր ազգային արժեհամակարգն ունի կարևոր դեր, իսկ դրա պահպանումը ուղիղ համեմատական է մեր ազգի, պետության, պետականության անվտանգության հետ: Այս հարցում դպրոցի և ուսուցչի դերը շատ կարևոր է: Դեռևս դպրոցում աշակերտի մեջ պետք է ձևավորել առավել կարևոր արժեհամակարգի՝ բարոյական, մշակութային, կրոնական, հանդուրժողական և այլն: Այս ամենի ձևավորումը երեխայի մեջ զարգացնում է երեխայի ներդաշնակ հոգեկան աշխարհը, օժտում է երխային մեր ազգի ներկայացուցիչը լինելու ցանկությամբ:

Այսպիսով, հետազոտության ընթացքում շատ հստակ գծերով նշվում են այն նպատակներն ու խնդիրները, որոնք ուղղված են ազգային արժեքների ձևավորմանը: Հատկապես հիմա մեր բոլորի համար օրհասական, ծանր այս իրավիճակում նման ուսուցումը առավել հատկանշանական է սովորողի մեջ ազգային ոգու բացահատման առումով: Կարևոր է որ ցավը սրտում, բայց հայրենասերի ոգով ուսուցիչը ուժ պետք է գտնի իր մեջ, այդ նույն ոգին ներարկելու սովորողի մեջ՝ կարևորելով բոլոր անհրաժեշտ ու նյութական ռեսուրսներից, հայի համար անփոխարինելի համարվող հողային ռեսուրսի նշանակությունը:

Ազգային արժեքներով դաստիարակված սերունդը քաջ գիտակցում է, որ հակառակ պատմության փոթորիկների ու հողմերի , չպետք է կոտրվել, այլ շարունակել մխրճված պահել արմատները այս դժվար, այս չափազանց դժվար, բայց առասպելական ու երանի հողի մեջ: Այսպիսով սովորողների մեջ ազգային արժեքների ձևավորման մասին հետազոտական աշխատանքի եզրակացությունն ամփոփենք Գարեգին Նժդեհի նշանավոր պատգամով.

«Աշխատիր առյուծի հետքեր թողնել ցեղիդ պատմության մեջ, և՛ բնավ մի՛ մտածիր այն մասին թե մի օր աղվեսը կարող է իր ապականությունը փռել թողածդ հետքի վրա»:

Եվ վերջապես՝ Հայաստանի Հանրապետությունում ապրողը հայը, ով ենթարկվում է նոր փորձությունների ու մարտահրավերների, պետք է շարունակի դիմակայել: Այս է մեր երկիրը, և այսէ մեր հողը, որտեղ պետք է ապրենք, որ պիտի պահենք, պահպանենքև փոխանցենք մեր սերունդներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արտուրո Կարդոնա Սանչես (2000): Արժեքների ձևավորում. Տեսություն, մտորումներ և պատասխաններ: Խմբագրական Grijalbo, Մեքսիկա.
2. Գրեմ Հայդոն (1997): Արժեքների ուսուցում. Նոր մոտեցում: Հրատարակություններ՝ Մորատա, Իսպանիա:
3. Էսկոբար, Արրեդոնդո և Ալբարան (2014): Էթիկա և արժեքներ: Grupo Խմբագրական Patria. Մեքսիկա
4. Ս. Աղաբաբյան, Դեպի աղբյուրը լույսի Ե. 1979թ. , էջ 218
5. Արժեքներ - Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան (wikipedia.org)
6. Формирование ценностных ориентаций обучающихся на уроках географии при переходе на стандарты второго поколения. (infourok.ru)
7. Վ.Ա. Սուխումլինսկին դաստիարակության մասին. «Լույս» հրատ., Երևան 1976թ. :
8. Վ.Ա. Սուխումլինսկի«Պավլիշի միջնակարգ դպրոցը». «Լույս» հրատ., Երևան 1984թ. :
9. Шевченко И.А., Кривдина И.Ю., Горшкова И.А., Каврижкина Д.А. ФОРМИРОВАНИЕ ДУХОВНО – НРАВСТВЕННЫХ ЦЕННОСТЕЙ В КУРСЕ ГЕОГРАФИИ НА ОСНОВЕ ИГРОВЫХ ТЕХНОЛОГИЙ // Международный журнал прикладных и фундаментальных исследований. – 2016. – № 8-2. – էջ 286-289:
10. Աշխարհագրություն. Ուսուցչի ձեռնարկ 7-8-րդ դասարան: «Մանմար» հրատ. Երևան – 2013:
11. Աշխարհագրություն. Ուսուցչի ձեռնարկ 6-րդ դասարան: «Աստղիկ գրատուն» հրատ. Երևան – 2013:
12. Աշխարհագրություն. Ուսուցչի ձեռնարկ 9-րդ դասարան: «Տիգրան Մեծ» հրատ. Երևան – 2014: